

ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ

Մայիսի 23-ից մինչև հունիսի 2-ը, օրհնությամբ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի Հայոց Թեմի առաջնորդ Տեր Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյանի, Վոլգոգրադի Սուրբ Գևորգե Եկեղեցու մի խումբ հայորդիներ, առաջնորդությամբ հոգևոր հովիվ Տեր Մաղաքիայի, ուխտի գնացին Երուսաղեմ՝ Սուրբ քաղաք:

Տասն օրերի ընթացքում Վոլգոգրադի հայ ուխտավորները եղան մեր Փրկչի տնօրինական գրեթե բոլոր սրբավայրերում:

Մայիսի 25-ին՝ Երևման Սուրբ Խաչի տոնին, Հայոց Սուրբ Հակոբե վանքի մեջ մասնակցեցին Սրբազան Պատարագին:

Ուխտավորներին առաջնորդող Վոլգոգրադի հայոց Հոգևոր հովիվ Տեր Մաղաքիան Պատարագ մատուցեց Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան տաճարում, Սուրբ կույս Մարիամի գերեզմանին՝ Վերափոխման տաճարի մեջ և Փրկչի գերեզմանին՝ Սուրբ Հարության տաճարի մեջ:

Ուխտավորները եղան նաև Հորդանան գետում, որտեղ մկրտվել էր Աստվածորդին, բարձրացան Թափոր լեռ, իրենց աղոթքը վերառաքեցին առ Աստված Համբարձման լեռան վրա, եղան Աստվածամոր ննջման եկեղեցում, Հայր Մերե-ի եկեղեցում, ուր անակնկալ իմացան, որ 300 լեզուներով գրված Հայր մերե աղոթի շարքում հայերենը զբաղեցնում էր երրորդ տեղը՝ լատիներենից և արաբերենից հետո:

Հայ ուխտավորները առիթ ունեցան լինելու նաև Գալիլիա ծովակի վրա, Մեռյալ և Միջերկրական ծովերում, Նազարեթ, Յաֆֆա, Երիբով, Հոպպե և Թել - Ավիվ քաղաքներում:

Ուխտավորներին իր օրհնությունը բաշխեց Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տեր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանը:

Ողջ ուխտագնացության ընթացքում Վոլգոգրադի ուխտավորներին ուղեկցում էին Սուրբ Երուսաղեմի Հակոբյանց միաբանության հոգևոր հայրերը:

Հունիսի 2-ին ուխտավորները վերադարձան Վոլգոգրադ՝ զորացած հավատքով և լի անմոռաց տպավորություններով:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵԻԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ